

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 18-Ի N 92-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« » _____ 2025 թվականի

N - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ
18-Ի N
92-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և
34-րդ հոդվածների

պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.
1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հունվարի
18-ի

«Վարձուբային վկայական տրամադրելու և դրա գործողությունը
դադարեցնելու, ֆիլմը դասակարգելու և

ֆիլմի տարիքային սահմանափակման մասին նշում կատարելու կարգը
հաստատելու մասին» N 92-Ն

որոշման 1-ին կետով հաստատված հավելվածում (այսուհետ՝ Որոշում)
կատարել հետևյալ

փոփոխությունները և լրացումները՝

1) 7-րդ կետում՝

ա. 7-րդ կետում «փաստաթղթերը» բառից հետո լրացնել «և նյութերը» բառերը.

բ. 3-րդ ենթակետից հանել «կինովարձույթի կամ հեռարձակման, կամ
մալուխային տարածման

համար նախատեսված» բառերը,

գ. 5-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5) ֆիլմի պատշաճ որակի պատճենը (առավելագույնը նախորդ երեք
տարիների ընթացքում

արտադրված նյութական կրիչով (HDD կամ SSD)) (ներկայացվում է դիտման և
հետագա պահպանման

համար), բացառությամբ օտարերկրյա արտադրության ֆիլմը առաջին անգամ
Եկրանային տարածում

կատարելու դեպքերի.».».

դ. Լրացնել 6-րդ ենթակետ հետևյալ բովանդակությամբ.

«6) օտարերկրյա արտադրության ֆիլմը առաջին անգամ Եկրանային
տարածում կատարելու

դեպքում ֆիլմից որոշակի դրվագների պատճենը (առավելագույնը նախորդ երեք տարիների ընթացքում արտադրված նյութական կրիչով (HDD կամ SSD), որ պարունակում է ենթագրեր կամ կրկնօրինակում և թույլ է տալիս իրականացնել ֆիլմի դասակարգում և տարիքային սահմանափակման վերաբերյալ նշում.»

2) 11-րդ կետում «ներկայացված հայտի գրանցման» բառերը փոխարինել «սույն կարգի 6-րդ և

7-րդ կետերով նախատեսված փաստաթղթերի ամբողջական փաթեթը ներկայացնելու» բառերով.

3) 19-րդ կետի 2-րդ ենթակետի երկրորդ պարբերությունում «լիարժեք հայտադիմումի

ներկայացման» բառերը փոխարինել «սույն կարգի 6-րդ և 7-րդ կետերով նախատեսված փաստաթղթերի

ամբողջական փաթեթը ներկայացնելու» բառերով.

4) 21-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր` 21.1-ին կետով` «21.1. «Սույն կարգի 7-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված դեպքում հայտատուն ապահովում

է ազգային մարմնի ներկայացուցիչների ներկայությունը Հայաստանի Հանրապետության տարածքում ֆիլմի

առաջին ցուցադրմանը (նախադիտման առկայության դեպքում նախադիտմանը), որի արդյունքում ազգային

մարմնի ներկայացուցիչների կողմից կազմվում է արձանագրություն` ֆիլմը ենթագիր կամ կրկնօրինակում

ունենալ կամ չունենալու և հայտատուի կողմից ներկայացված դասակարգմանը ու տարիքային

սահմանափակման վերաբերյալ նշումին համապատասխանելու կամ չհամապատասխանելու վերաբերյալ (

Ձև N 10) :»

5) 24-րդ կետում «գործողությունը դադարեցնելու» բառերը փոխարինել «տրամադրման հայտը

մերժելու» բառերով.

6). 25-րդ կետը լրացնել 3-րդ ենթակետով հետևյալ բովանդակությամբ.

«3) սույն կարգի 21.1 կետի համաձայն կազմվել է արձանագրություն ֆիլմը հայտատուի կողմից

ներկայացված դասակարգմանը և տարիքային սահմանափակման վերաբերյալ նշումին

չհամապատասխանելու, ֆիլմի ենթագիր կամ կրկնօրինակում չունենալու վերաբերյալ.»

7) 26-րդ կետում «կցելով հայտադիմումի փաստաթղթային փաթեթը» բառերից հետո լրացնել

«իսկ սույն կարգի 25-րդ կետի 3-րդ ենթակետի կիրառման դեպքում նաև 21.1 կետով սահմանված

արձանագրության պատճենը» բառերով.

7) Ձև N 9-ից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր` Ձև N 10-ով`

Ձև N 10

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ֆիլմը ենթագիր կամ կրկնօրինակում ունենալու կամ չունենալու և հայտատուի կողմից ներկայացված դասակարգմանը և տարիքային սահմանափակման վերաբերյալ նշումին համապատասխանելու կամ

չհամապատասխանելու վերաբերյալ

Արձանագրում ենք, որ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ ներկայացված __ (ֆիլմի անվանումը) __ ֆիլմը ունի/չունի ենթագրում/կրկնօրինակում, համապատասխանում է/չի համապատասխանում (ընդգծել անհրաժեշտը) հայտատուի կողմից ներկայացված դասակարգմանը և տարիքային սահմանափակման վերաբերյալ նշումին հետևյալ պատճառաբանությամբ.

(պաշտոն) (ստորագրություն) (Ա.Ա.Հ.) _____ 202

թ.

»:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության Ն. Փաշինյան
վարչապետ